— Ուրա՜խ եմ... — ասաց վարպետը, ոլորելով աջ կողմի ընչացքը, որ նշան էր նրա սրտի առանձին բաւականութեան: — Ուրեմն վատ չէր լինի, եթէ խմէինք մի-մի բաժակ օղի ձեր յաջողութեան համար:

— Վատ չէր լինի, — ասաց Ասլանը, — միայն ոչ առանց նախաճաշելիքի: Մենք բաւական սոված ենք:

— Այդ ինքնըստինքեան հասկանալի է, — ասաց վարպետը ժպտալով եւ դուրս գնաց ընթրիք պատոիրելու:

Ասլանը ձգոեցաւ օթոցի վրայ եւ, բարձի փոխարէն ձախ ձեռքը նեցուկ տալով գլխին, նայում էր առաստաղին, որի մերկ գերանները, հնութիւնից դեղնելով, ստացել էին մուգ — ծիրանի գոյն, իսկ ճանճերը նրանց վրայ դրել էին միլիոնաւոր սեւ բծեր: Նա ընկղմոած էր մտածութիւնների մէջ: Առանց մտածութիւնների չէի եւ ես: Գալով այդ քաղաքը, թէեւ ծիծաղելի է, բայց պէտք է խոստովանվիմ, որ իմ ամենամեծ բաղձանքներից մէկն այն էր, որ տեսնեմ Վանայ հռչակաւոր կատուները: Միթէ՞ այդ տան մէջ կատու չկայ, մտածում էի ես, եւ աչքերս անհամբերութեամբ թափառում էին այս կողմ ու այն կողմ: Չգիտեմ այստեղ ինչ հոգեբանական մի գաղտնիք կայ, որ շատ անգամ մարդ յանկարծ տեսնում է միեւնոյն առարկան, որի վրայ մի րոպէ առաջ անգիտակցաբար մտածում էր: Ահա հանդիսաւոր կերպով ներս մտաւ իմ նազելին, բոլորովին սպիտակ, որպէս ձիւն, երկայն, մետաքսի նման փափուկ մազերով եւ թաւիշեայ բրդոտ թաթիկներով: Նա լուռ անցաւ սենեակի միջով, նախ մօտեցաւ ինձ եւ մի առանձին քնքշութեամբ գանգրահեր գլուխը եւ թաւամազ պոչը քսեց իմ երեսին, յետոյ գնաց բարեւելու Ասլանին: Շնորհալի կերպով մռմռալով, մի քանի պտոյտներ կատարեց Ասլանի շուրջը եւ ապա նստեց նրա մօտ: Կարծես, այդ խելացի անասունն էլ էր հասկանում, թէ մեզանից որն էր աւելի յարգանքի արժանի: Ասլանը սկսեց փայփայել նրա գեղեցիկ դլուխը, մէջքն ու ագին: Առաջին անգամ մի զարմանալի երեւոյթ գրաւեց իմ ուշադրութեանը: Որքան Ասլանը ձեռքով շփում էր նրա գլուխն ու մէջքը, այնքան արագ նրա երկար մազերը ճրըխկճրըխկում էին եւ դուրս էին արձակում կրակի ամբողջ փոշի:

— Այդ ի՞նչ է, — հարցրի ես:

— Կայծեր են... — պատասխանեց նա եւ սկսեց բացատրել նրանց դուրս ցայտելու բնական պատճառները, թէ որպէս շփումից առաջ է գալիս կրակը: